# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1638-Ա « 06 » մայիսի 2024 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի և «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ-ի միջև 18.01.2024 թվականին կնքված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/13-3» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ-ն պարտավորվել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները: «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ-ն, խախտելով Պայմանագով սահմանված պարտավորությունները, չի մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքները: Պայմանագրի N 1 հավելվածի «մատակարարման ժամանակացույցի» համաձայն՝ մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել պայմանագիրը/համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո, մինչև 26.03.2024թ.:

Երևանի քաղաքապետարանը, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.5 կետը, 18.04.2024թ. էլեկտրոնային փոստով, ինչպես նաև հեռախոսակապի միջոցով դիմել է «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ-ին, տվել է ողջամիտ ժամկետ մինչև 25.04.2024 թվականը՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները մատակարարելու պահանջով, ինչը «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ-ի կողմից չի կատարվել: 25.04.2024 թվականի ծանուցմամբ «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ-ն տեղեկացվել է՝ պայմանագրային պարտավորությունները չկատարելու հիմքով համապատասխան իրավական կարգավորումների կիրառման վերաբերյալ:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 2.1.7 կետի և 2.1.7.1. կետի բ) ենթակետի պահանջով՝ միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում՝ սույն թվականի ապրիլի 25-ին և Պայմանագիրը ապրիլի 26-ի դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1.«Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ-ն ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**